



ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հետազոտություն

Երևան

2023թ

ՀՏԴ 378(479.25)
ԳՄԴ 74.484(5Հ)
Հ 247



«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



Հետազոտությունն իրականացվել է Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների (ԲԿԲՓ) կողմից՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ) և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) աջակցությամբ:

Հեղինակներ

Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետներ.

ԱՐԵՎԻԿ ՕՀԱՆՅԱՆ, Եվրասիա միջազգային համալսարանի Ռ-ազմավարական ծրագրերի ղեկավար, Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ

ԳԱՐԵԳԻՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Միջազգային կապերի ղեկարտամենտի պետ, Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի ղեկան, Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Ծրագրերի մշակման ստորաբաժանման ղեկավար, Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ

ՔՐԻՍՏԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Տարածաշրջանային մագիստրոսական ծրագրի համակարգող, Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ

ՀՀ բուհերի կարողությունների զարգացման կարիքի գնահատում / Օհանյան Ա. և ուրիշ.- Եր.:

Հ 247 Հեղ. հրատ., 2023.- 34 էջ:



ՀՏԴ 378(479.25)
ԳՄԴ 74.484(5Հ)

ISBN 978-9939-0-4731-7

© Օհանյան Ա., 2023

© Համբարձումյան Գ., 2023

© Միքայելյան Տ., 2023

© Մինասյան Ռ., 2023

© Գևորգյան Ք., 2023

<https://doi.org/10.53614/9789939047317>

Բովանդակություն

ՀՀ բուհերի կարողությունների զարգացման կարիքի գնահատում	4
Հիմնական արդյունքներ	5
ՄԱՍ I Համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում	5
ՄԱՍ II Կրթության կառավարման արդյունավետության բարձրացում	10
ՄԱՍ III Ուսուցում և ուսումնառություն	12
ՄԱՍ VI Թվայնացում	15
ՄԱՍ V Կրթական ծառայությունների միջազգայնացում և արտահանում	18
ՄԱՍ VI Հետազոտության միջազգայնացում	21
Հիմնական արդյունքների վերլուծություն և խորհրդատվություններ	26
Հավելված 1 Հետազոտության մասնակից բուհերի ցանկը և հապավումները	37

ՀՀ բուհերի կարողությունների զարգացման կարիքի գնահատում

Նախաբան

Հարցման նպատակն է հավաքագրել և ներկայացնել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա կարիքների և մարտահրավերների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ ստորև ներկայացված 6 հիմնական ուղղություններով.

1. համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում,
2. կրթության կառավարման արդյունավետության բարձրացում,
3. ուսուցում և ուսումնառություն,
4. թվայնացում,
5. կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում,
6. հետազոտության միջազգայնացում:

Հարցման արդյունքները և վերլուծությունն օգտակար կլինի ազգային, ինչպես նաև ինստիտուցիոնալ մակարդակներում բարեփոխումների իրականացման ընթացքում. հարցաթերթը մշակվել է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ առաջնահերթությունների հիման վրա՝ ամփոփելով բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ազգային մակարդակում նախանշված ռազմավարական նպատակների իրականացման ընթացքում առաջնային խնդիրները և կարողությունների զարգացման առաջնահերթությունները:

Հարցաթերթն ուղարկվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած 18 պետական և 6 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների էլեկտրոնային հարցման տեսքով, որից հարցմանը մասնակցել է 18 պետական և 1 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (բուհ): Հարցաթերթը բուհերին ուղարկվել է ԿԳՄՍՆ կողմից: Հարցաթերթը լրացրած բուհերի ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:

Հարցաթերթը բաղկացած էր բաց և փակ հարցերից: Որոշ հարցադրումների պահանջն էր վերբեռնել ինստիտուցիոնալ փաստաթղթեր: Հարցման քանակական վերլուծությունը փորձագիտական խումբը զուգակցել է որակական մեթոդներով. մասնավորապես իրականացվել է նաև փաստաթղթերի բովանդակության վերլուծություն: Անհատական բուհերի կողմից ներկայացված բաց հարցերի պատասխանները և փաստաթղթերը անվանական ներկայացված չեն սույն հաշվետվության մեջ, սակայն դրանք ըստ անհրաժեշտության վերլուծվել և ընդհանրացվել, խմբավորվել են:

Հիմնական արդյունքներ


Այս բաժնում ներկայացված են բուհերի կողմից տրված պատասխանները: Բաց հարցերի պատասխանները խմբավորվել են ըստ անհրաժեշտության: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է նաև բուհերի կողմից վերբեռնված փաստաթղթերը (առկայությունը և բովանդակությունը), որոնց վերաբերյալ վերլուծություն ներկայացված է «Արդյունքների վերլուծություն և խորհրդատվություն» բաժնում: Բաց հարցերի պատասխանները տրոհվել են՝ խմբավորման դեպքում, սակայն ներկայացված են առանց խմբագրման (բուհերի արձագանքը նույնությամբ ներկայացված է):

ՄԱՍ I

Համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում

Հարց 1. Ներառականությունը բուհում ռազմավարական նպատակ է:

Պատասխան	Թիվ	Նշումներ
Այո	16	
Ոչ	2	
Այլ	1	Բուհի զարգացման ռազմավարական ծրագրում ներառականությունը դիտարկվում է որպես արժեք
Ընդամենը	19	



- Այո
- Ոչ
- Բուհի զարգացման ռազմավարական ծրագրում ներառականությունը դիտարկվում է որպես արժեք

Հարց 2. Եթե դրական եք արձագանքել վերոհիշյալ հարցին, խնդրում ենք մեջբերել բուհի ռազմավարությունից համապատասխան նպատակը:

Պատասխաններ

ՄԻՋԱՎԱՅՐ	
1	Ենթակառուցվածքների զարգացում, կրթական, գիտահետազոտական, նյութատեխնիկական, տեխնոլոգիական և այլ ռեսուրսների շարունակական համալրում ու արդիականացում, ներառական կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:
2	Ներառական կրթական միջավայրի ստեղծում, հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիության ապահովում:
3	Խնդիր 1.5. Բարելավել կրթական միջավայրը Միջոցառում 1.5.1. ներառական կրթության կազմակերպման ռազմավարության մշակում՝ հենված կրթական միջավայրի բարելավման քաղաքականության վրա:

4	Առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման կարևորագույն խնդիրներից է համապատասխան ենթակառուցվածքների և ռեսուրսների ապահովումը, մշտադիտարկումն ու բարելավումը: Վերջինս ենթադրում է նաև ուսումնական և աշխատանքային միջավայրի հարմարեցում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց պահանջներին:
5	Ռազմավարական նպատակ 4. Ենթակառուցվածքների զարգացում, Ենթանպատակ 1. Համապատասխանեցնել շենք-շինությունները, սպորտային դահլիճները, լսարանները կրթական միջազգային չափորոշիչներին և ներառականության պահանջներին:
6	Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռաբար ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ:
7	Խնդիր 2. Բարելավված կրթական միջավայր, մասնավորապես, վերանորոգված ուսումնական մասնաշենքեր՝ հաշվի առնելով ներառականության և աղետների ռիսկերի կառավարման պահանջները:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Արտացոլված է ՌԾ գործողությունների պլանում որպես 4-րդ ռազմավարական խնդրի լուծմանը միտված գործողություն. 4.4. Ստեղծել առանձնահատուկ պայմաններ ուսումնական գործընթացը կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի դարձնելու նպատակով:
2	Նպատակ 1. Մրցունակ կրթական ծրագրեր և ակադեմիական առողջ միջավայր: Նպատակ 8. Աջակցություն ուսանողներին, ներառական միջավայր, շրջանավարտների հետ ամուր կապեր:
3	Նպատակ 1. Ուսանողակենտրոն էկոհամակարգի ապահովում և միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրերի իրականացում: Գործողություններ՝ <ul style="list-style-type: none"> • Ընդլայնել ուսումնառության առցանց համակարգի կիրառման հնարավորությունները: • Մշակել ուսանողի անհատական ուսումնառության կազմակերպման մեխանիզմներ:
4	1. Դասավանդման և ուսումնառության գործընթացում ուսանողակենտրոն, ներառական և խելացի կրթության մոտեցումների ակտիվ կիրառում, մասնավորապես STEM առարկաների կրթական ծրագրերում:
5	Խնդիր 6. Ապագա դիմորդների համար նորարարական մոտեցումներով նախապատրաստական դասընթացների կազմակերպում՝ մատչելիության և ներառականության սկզբունքների պահպանմամբ:

ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ


1	Նպատակ՝ կրթության որակի ապահովում և բարելավում: Ենթանպատակ՝ ստեղծել կրթական հավասար պայմաններ բոլոր սոցիալական խմբերի համար:
2	Ներառականությունն ինքնին ենթադրում է «բոլորի համար» մոտեցումը, այն առանձնացնելը արդեն իսկ խտրականություն է, ուստի բուհի ռազմավարական ծրագիրը յուրաքանչյուր մասով ատացում է ներառականության խթանումը:
3	Ընդլայնել ներառական բարձրագույն կրթության զարգացման հնարավորությունները հաշմանդամ ուսանողների համար:
4	Բուհը նպաստում է իր բոլոր ուսանողների, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսումնառությանը՝ օգնելով յուրաքանչյուրին ձեռք բերել մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔ

1	<p>Բուհի զարգացման ռազմավարական ծրագրում ներառականությունը դիտարկվում է որպես արժեք: Բուհի Ռազմավարական ծրագրից մեջբերում. «Ներառականություն և բազմազանություն. մենք դիտարկում ենք դասախոսների, ուսանողների միջև համագործակցությունը որպես բուհի հիմնարար գործունեություն՝ կարևորելով տեղացի և օտարերկրացի ուսանողների, աշխատակիցների և գործընկերների կարիքների ժամանակին բացահայտման միասնիզմների բազմազանությունը»:</p>
2	<p>Ներգրավել բարձր ներուժ ունեցող դիմորդների՝ ապահովելով ներառականության սկզբունքը: Համալսարանի հիմնարար արժեք է ներառականությունը:</p>

Հարց 3. Ձեր բուհում գործում է ներառականության քաղաքականություն կամ կանոնակարգող այլ փաստաթուղթ

Պատասխան	Թիվ	Նշումներ
Այո	4	
Ոչ	14	
Այլ	1	Մշակման փուլում է
Ընդամենը	19	




Հարց 4. Եթե դրական եք արձագանքել վերոհիշյալ հարցին, խնդրում ենք մեջբերել բուհի ռազմավարությունից համապատասխան նպատակը:

<p>Հարցված բուհերից 4-ը ներկայացրել են ներառականության զարգացման քաղաքականություն կամ հայեցակարգ: Որևէ բուհ չի ներկայացրել կանոնակարգող փաստաթուղթ (կարգ, կանոնակարգ, ընթացակարգ և այլն):</p>

Հարց 5. Ներառականություն ապահովելու նպատակով կարևոր է (խնդրում ենք դասակարգել ըստ կարևորության՝ 5 ամենակարևոր)


<p>(Յուրաքանչյուր թիվ հնարավոր է ընտրել մեկ անգամ. հակառակ դեպքում հաջորդ հարցին անցնելը հնարավոր չի լինի)</p>
--

Ներառականություն ապահովելու նպատակով խնդրում ենք դասակարգել ըստ կարևորության՝ 5 ամենակարևոր



Հարց 6. Ձեր բուհում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողների համար հասանելի ծառայություններն են

	Պատասխան	Թիվ	%
1	Խորհրդատվություն մինչ ընդունելությունը	14	73.7
2	Առանձնահատուկ պայմաններ և ընթացակարգ գիտելիքի ստուգման նպատակով (առավել երկար ժամանակ լրացնելու թեստը, հանգիստ միջավայր և այլն)	4	21.1
3	Շենքային ենթակառուցվածքների հարմարեցումներ (մուտք, լսարաններ, սանհանգույցներ և այլն)	12	63.2
4	Հարմարեցված ուսումնառության ռեսուրսներ (դասագրքեր, բաժանվող նյութեր և այլն)	2	10.5
5	Աջակցություն տեսողական խնդիրներ ունեցող ուսանողների համար ընթերցողներ վարձելու հարցում	3	15.8
6	Վկայագրված թարգմանիչների ապահովում լսողական խնդիրներ ունեցող ուսանողների համար	1	5.3
7	Հարմարեցված կահույք	0	0
8	Հարմարեցված ծրագրերով հագեցած համակարգիչներ	0	0
9	Հոգեբան	6	31.6
10	Վերոհիշյալ ԲՈԼՈՐ ծառայությունները բուհն ապահովում է	1	5.3
11	Վերոհիշյալ նշված ծառայություններից որևէ մեկը բուհը ՉԻ ապահովում	1	5.3



Բուհերի կողմից նշված այլ ծառայություններ

- Բրայելյան համակարգի կիրառում՝ ըստ անհրաժեշտության:
- Կիրառվում են բարձրագույն կրթության մեջ ներառվածությանն աջակցելու հանգուցատարրեր՝ զեղչեր, նպաստներ, ինչպես նաև ուսանողներին իրենց կրթության ֆինանսավորման հարցում օժանդակող լրացուցիչ գործիքներ՝ մասնավճար, տարաժամկետ կամ հետաձգված վճարումներ, աշխատանք-կրթություն ծրագրեր և այլն:
- Վերապատրաստված ՊԴ և վարչական անձնակազմ:
- Հազեցած առցանց կրթություն կազմակերպելու հարթակ (MS Teams):
- Ընթացիկ խորհրդատվություն:

Հարց 7. Կրթության առանձնահատուկ կարիքներով ուսանողների աջակցության համար բուհն ունի


Պատասխան	Թիվ	%
Առանձանցված ստորաբաժանում	0	0
Պատասխանատու	4	21.1
Չի ապահովում վերոհիշյալ որևէ տարբերակը	8	42.1
Այլ	7	37
Ընդամենը	19	

Այլ պատասխաններ.

1. Բուհի ցանկացած ստորաբաժանում, այդ թվում դեկանատները և ամբիոնները, մշտապես պատրաստակամորեն աջակցում են կրթության առանձնահատուկ կարիքներով ուսանողներին:
2. Բոլոր դասախոսները շարունակական աջակցություն են ցուցաբերում:
3. Առկա է ներառական կրթության հարցերով խորհուրդ:
4. Ուսանողների աջակցման և շրջանավարտների հետ համագործակցության կենտրոն:
5. Համակարգը կայացման փուլում է:
6. Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետը տրամադրում է աջակցություն բուհի բոլոր ֆակուլտետներին անհրաժեշտության դեպքում:
7. Անհատական աջակիցների օղակ:


Հարց 8. Որո՞նք եք համարում ինստիտուցիոնալ մակարդակում կրթության կառավարման հրապրապ լուծման ենթակա 3 առավել կարևոր խնդիրները

	Պատասխան	Թիվ	%
1	Ռազմավարական պլանավորման փորձի պակասը	5	26.3
2	Արդյունքահեն կառավարման փորձի պակասը	3	15.8
3	Որակի ապահովման փորձի պակասը	0	
4	Կրթության կառավարման տեղեկատվական թերի համակարգերը	5	26.3
5	Տվյալահեն կառավարման փորձի պակասը	4	21.1
6	Ռեսուրսների ոչ արդյունավետ կառավարումը	3	15.8
7	Արդյունքահեն կրթական ծրագրերի զարգացման փորձի պակասը	3	15.8
8	Նորարարությունների գեներացման, խթանման, ներդրման և կառավարման փորձի պակասը	12	63.2
9	Կանաչ կառավարման փորձի պակասը	7	36.8
10	Արդյունաբերության ոլորտի և գործատուների հետ համագործակցության փորձի պակասը	4	21.1
11	Վերոհիշյալ որևէ խնդիր հրատապ չէ	1	5.3
12	Վերոհիշյալ բոլոր խնդիրների լուծումը հրատապ է	2	10.5
	Այլ, այդ թվում.		
13	Կրթական ծրագրերի կառավարում, ինքնաձախսաձածկում	1	5.3
14	Բուհերի ինքնավարությունը սահմանափակող օրենսդրական կարգավորումները	1	5.3
	Ընդամենը	19	




Հարց 9. Խնդրում ենք ընտրել 5 փարբերակ, որոնց ուղղությամբ վերապատրաստումն առավել կարևորում եք միջնաժամկետ կտրվածքով

	Պատասխան	Թիվ	%
1	Ռազմավարական պլանավորում	6	31.6
2	Արդյունքահեն կառավարում	4	21.1
3	Որակի ապահովում	5	26.6
4	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր	6	31.6
5	Տվյալահեն կառավարում	6	31.6
6	Ռեսուրսների կառավարում	7	36.8
7	Արդյունքահեն կրթական ծրագրերի զարգացում և կառավարում	6	31.6
8	Նորարարությունների կառավարում	9	47.4
9	Կանաչ կառավարում	5	26.3
10	Բուհ-գործատու կապի ապահովում	7	36.8
11	Միկրոորակավորումների զարգացում և ներդրում	9	47.4
12	Բուհերի ձեռնարկատիրական կարողությունների զարգացում	9	47.4
13	Վերոհիշյալ թեմաներից որևէ տարբերակ չենք կարևորում	1	5.3
14	Վերոհիշյալ բոլոր թեմաներն էլ կարևոր են	1	5.3
	Այլ		
	Ընդամենը	19	



Հարց 10. Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բուհում ինտերակտիվ դասավանդման մեթոդների ներդրման ներկա մակարդակը:

Տարբերակ	Թիվ	%
Շատ ցածր	0	0
Ցածր	2	10.5
Միջին	9	47.4
Բարձր	7	36.8
Շատ բարձր	1	5.3
Դժվարանում եմ պատասխանել		
Ընդամենը	19	




Այլ պատասխաններ.

1. Յուրաքանչյուր դասընթաց ունի իր առարկայական ծրագիրը, որում ամրագրված են ուսուցման, ուսումնառության, գնահատման մեթոդները, որոնց թվում պարտադիր են փոխներգործուն մեթոդների ներառումը: Դրանք համապատասխանեցվում են նաև ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման մեթոդներին:
2. Լաբորատորիաներում փորձարկումները:
3. Այո կան, դեռ ավելին լավագույն փորձը գնահատվում է, գիտական խորհրդում ներկայացվում և պարզևատրվում:
4. Հիբրիդային և անհամաժամանակյա ձևաչափով դասընթացների իրականացման փորձի առկայություն:
5. Հաջողված են խմբային քննարկումների, դեպքերի ուսումնասիրությունների, սիմուլյացիաների և գործնական փորձերի նախագծման և անցկացման մեթոդների կիրառման դեպքերը:
6. Թվային մարքեթինգ դասընթաց,
7. Մարքեթինգ մասնագիտության կրթական ծրագիր,
8. Մագիստրատուրայի Տեղեկատվական համակարգեր մասնագիտության կրթական ծրագիր և բազմաթիվ այլ դասընթացներ:
9. Դրանք պարբերաբար վերանայվում են փորձառու դասախոսների կողմից:
10. Այո: Օրինակ՝ Սերվիս մասնագիտությամբ կիրառվող ինտերակտիվ մեթոդների գործածման դասերի իրականացումը:
11. Մենթիմետր, Մուդլ և այլ հարթակների կիրառում:
12. Առկա են ինտերակտիվ դասավանդման մեթոդների կիրառումը:
13. Իրականացվում են հեռավար լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնց շրջանակներում հասարակական որոշակի խմբեր կարողացել են հեռավար լրացուցիչ կրթություն ստանալ:

14. Դեպքի ուսումնասիրություն, նախագծահեն կրթություն:
15. Հաշվի առնելով բուհի առանձնահատկությունը՝ դասընթացների մեծամասնությունը հիմնված է գործնական և կիրառական մեթոդների վրա:
16. «Նախագծի կառավարում» դասընթացը իրականացվում է ինտերակտիվ դասավանդման մեթոդների լայն կիրառմամբ: Լսարանային պարապմունքների ընթացքում իրականացվում են "դեպքերի վերլուծություն" (case study analysis), թեմայիկ խաղեր (օրինակ "tower building" և այլ), տեսահոլովակների դիտում և վերլուծություն, քննարկումներ:
17. Մեր պարկերացմամբ ինտերակտիվ ուսուցումը նախևառաջ դա երկխոսությամբ ուսուցումն է, որը ուսանողի մեջ արթնացնում է մոտիվացիա, ակտիվացնում գիտելիքների յուրացման գործընթացը և դրանց ստեղծագործական կիրառումը գործնական խնդիրների լուծման համար: Այն ինքնի արդեն փափուկ հմտությունների ուսուցման և փոխանցման մեթոդ է:
18. Տեղի են ունեցել վերապատրաստումներ, շրջված լսարան, խաղայնացման մեթոդաբանության կիրառում, case study և այլն, կիրառումը տարբեր կրթական ծրագրերի շրջանակում:


Հարց 11. Խնդրում ենք ընտրել ուսուցման և ուսումնառության 3 մեթոդ, որոնց ուղղությամբ վերապատրաստումն առավել հրապրապ է և կլինեն առավել օգտակար

	Պատասխան	Թիվ	%
1	Խմբային քննարկումներ	3	15.8
2	Դեպքի ուսումնասիրություն (case study)	7	36.8
3	Դերային խաղեր	1	5.3
4	Սիմուլյացիաներ	1	5.3
5	Գործնական փորձերի նախագծում և անցկացում	14	73.7
6	Նախագծահեն ուսուցում	13	68.4
7	Ձևավորող գնահատման մեթոդներ	7	36.8
8	Վերոհիշյալ խնդիրներից որևէ տարբերակ չենք կարևորում	0	0
9	Վերոհիշյալ բոլոր խնդիրներն էլ կարևոր են	5	26.3
	Այլ		
	Ընդամենը	19	




Հարց 12. Խնդրում ենք ընտրել 3 խնդիր, որոնք համարում եք առանցքային խոչընդոտ բուհում ուսուցման և ուսումնառության մեթոդներն առավել համագործակցային և ուսանողակենտրոն դարձնելու համար

	Պատասխան	Թիվ	%
1	Համապատասխան տեխնոլոգիաների կամ ռեսուրսների հասանելիության բացակայություն	7	36.8
2	Սահմանափակ պլանավորման ժամանակ	4	21.1
3	Դասախոսների վերապատրաստման կամ մասնագիտական զարգացման ոչ բավարար հնարավորություններ	11	57.9
4	Ուսանողների կամ մանկավարժների դիմադրությունն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու հարցում	7	36.8
5	Խմբերում ուսանողների մեծ թիվ	2	10.5
6	Անբավարար ենթակառուցվածքներ կամ հարմարություններ ինտերակտիվ ուսուցման և ուսումնառության համար	4	21.1
7	Ֆինանսական սահմանափակումներ	8	42.1
8	Վերոհիշյալ խնդիրներից որևէ տարբերակ չենք կարևորում	0	0
9	Վերոհիշյալ բոլոր խնդիրներն էլ կարևոր են	2	10.5
	Այլ, այդ թվում.		
10	Խմբերում ուսանողների փոքր թվաքանակ	1	5.3
11	Նշվածներից որևէ մեկն առանցքային խնդիր չի հանդիսանում մեր բուհում	1	5.3




Հարց 13. Ինչպե՞ս կգնահատեք բուհում կառավարման պրակտիկայի թվայնացման ներկայիս մակարդակը:

Տարբերակ	Թիվ	%
Շատ ցածր	0	0
Ցածր	3	15.8
Միջին	9	47.4
Բարձր	5	26.3
Շատ բարձր	2	10.5
Դժվարանում եմ պատասխանել	0	0
Ընդամենը	19	



Հարց 14. Կառավարման ի՞նչ ոլորտներն են հաջողությամբ թվայնացվել բուհում, որը ներկայացնում եք:

Տարբերակ	Թիվ	%
Ֆինանսական կառավարում և հաշվապահություն	15	78.9
Մարդկային ռեսուրսների կառավարում (օրինակ՝ հավաքագրում, կատարողականի գնահատում)	5	26.3
Փաստաթղթեր և հաշվառում	14	73.7
Անձնակազմի միջև հաղորդակցություն և համագործակցություն	8	42.1
Ուսումնական գործընթացի կառավարում	1	5.3
Այլ, այդ թվում.		
Կրթական մի շարք գործընթացներ	1	5.3
Ուսանողական ակադեմիական տվյալների բազայի գործարկում	1	5.3



Հարց 15. Որո՞նք են համալսարանում կառավարչական գործընթացների թվայնացման հիմնական խոչընդոտները կամ մարտահրավերները:

Պատասխաններ

Մարդկային ռեսուրսներ

1. Անձնակազմի պատրաստականություն
2. Փորձի և համապատասխան մասնագետների պակասը
3. Թվայնացված համակարգից անձնակազմի օգրվելու հմտությունների պակասը
4. SS ոլորտի բարձրակարգ մասնագետների պակաս
5. SS մասնագետի հաստիքով վարչական աշխատողի բացակայություն
6. Շահառուների թույլ գիտելիքները այդ ուղղությամբ
7. Անձնակազմի ոչ պատրաստ լինելը
8. Անձնակազմի որոշ մասի կարողությունների պակաս
9. Մարդկային ռեսուրսների վերապատրաստման կարիք կա
10. Մարդկային ռեսուրսի վերապատրաստման կարիք
11. Անձնակազմի կարողությունների ոչ բարձր մակարդակ

Ֆինանսական ռեսուրսներ

1. Ֆինանսական միջոցների սակավությունը
2. Ֆինանսական ռեսուրսների սակավությունը
3. Ֆինանսների պակաս
4. Ֆինանսական ոչ բավարար միջոցները
5. Համապատասխան ֆինանսավորման բացակայություն
6. Բարձրարժեք տեղեկատվական տեխնոլոգիաների նորագույն համակարգերի և առկա համակարգերի շարունակական արդիականացման կարիք
7. SS գործիքների ներդրման համեմատաբար բարձր գործառնական ծախսեր

Տեխնիկական խնդիրներ


1. Բուիերում կառավարման որոշ համակարգերի տեղայնացման դեպքում տեխնիկական խնդիրներ
2. Գործիքակազմի անբավարարություն
3. Տեխնիկական ռեսուրսների սղություն

Չկա խոչընդոտ

1. Առկա չեն
2. Խոչընդոտներ չկան

Հարց 16. Ուսուցման և ուսումնառության ո՞ր ոլորտներն են հաջողությամբ թվայնացվել բուհում:

Տարբերակ	Թիվ	%
Դասընթացի նյութերի բաշխում (օրինակ՝ առցանց հարթակներ, ուսուցման կառավարման համակարգեր)	13	68.4
Հաղորդակցություն ուսանողների հետ (օրինակ՝ էլեկտրոնային փոստ, առցանց քննարկման ֆորումներ)	12	63.2
Գնահատում (օրինակ՝ առցանց քննություններ, ավտոմատացված գնահատման համակարգեր)	6	31.6
Վիրտուալ դասասենյակներ կամ առցանց դասախոսություններ	7	36.8
Վերոհիշյալ բոլոր տարբերակները	3	15.8
Վերոհիշյալ ոչ մի տարբերակ	1	5.3



Հարց 17. Որո՞նք են բուհում դասավանդման և ուսուցման պրակտիկայի թվայնացման հիմնական խոչընդոտները կամ մարտահրավերները:

Պատասխաններ

Ռազմավարական կառավարում

1. Բարձրագույն կրթության համակարգում ընդհանուր մոտեցման բացակայությունը
2. Բուհում դասավանդման և ուսուցման գործընթացի թվայնացման պակաս կարևորում
3. Մասնագիտական դասընթացները առցանց անցկացնելը արդյունավետ չեն
4. Ուսումնական գործընթացի կառավարման համակարգի ոչ լիարժեք գործարկումը

Ֆինանսական ռեսուրսներ

1. Ֆինանսական, նյութատեխնիկական ոչ բավարար միջոցները

Մարդկային ռեսուրսներ


1. Համապատասխան մասնագետների պակասը
2. Անձնակազմի և ուսանողների կարողությունների ոչ բարձր մակարդակ
3. ՊԴ կազմի՝ փոփոխությունների դիմադրելու հանգամանքը
4. Ոչ բոլոր դասախոսներն են լիարժեք տիրապետում էլեկտրոնային ուսուցմանը
5. Դասախոսական կազմի ոչ բավարար հմտությունները
6. Այս պահին խոչընդոտները հաղթահարված են, սակայն և եղել են խնդիրներ՝ կապված մարդկային ռեսուրսի կողմից համակարգերի շահագործման հետ կապված
7. Ուսանողների կողմից էլեկտրոնային դասավանդման գործիքների արդյունավետ կիրառման մշակույթի պակաս (օր.՝ էլ փոստով հաղորդակցվելու խնդիր, առցանց դասախոսությունների պատշաճ մասնակցություն, կապի որակի խնդիր և այլն)
8. Անձնակազմի որոշ մասի կարողությունների պակասը
9. Մասնագետների անպատրաստությունը նորարարություն ընդունելու հարցում
10. Բարձրակարգ տեղեկատվական տեխնոլոգիաների լրացուցիչ ձեռքբերման կարիք և արդիականացում, ինչպես նաև դասախոսների ոչ մեծ մասի վերապատրաստման կարիք
11. Ուսանողների անտարբերությունը, դասախոսների անվստահությունն այդ համակարգի հանդեպ

Չկա խոչընդոտ

1. Այդպիսի խոչընդոտներ չկան
2. Խոչընդոտներ առկա չեն
3. Խոչընդոտներ առկա չեն, կարելի է ասել մի փոքր ժամանակը, որ SS կենտրոնը հասցնի ամբողջությամբ ավարտի հարթակի պատրաստումը

**Հարց 18. Արդյո՞ք միջազգայնացումը սահմանված է բուհի առաքելությամբ
և/կամ տեսլականում:**

Տարբերակ	Թիվ	%
Այո	19	100
Ոչ	0	0
Դժվարանում եմ պատասխանել	0	0




**Հարց 19. Նախորդ հարցին դրական պատասխանելու դեպքում խնդրում ենք
վերբեռնել համապատասխան փաստաթուղթը**

19 բուհերից 12-ը վերբեռնել են համապատասխան փաստաթուղթը:

Հարց 20. Խնդրում ենք ընտրել

Տարբերակ	Թիվ	%
Բուհն ունի միջազգայնացման ռազմավարություն	7	36.8
Բուհի միջազգայնացման ռազմավարությունը ներառված է բուհի ընդհանուր ռազմավարական ծրագրում (ԲԾ)՝ որպես առանձին նպատակ	11	57.9
Բուհը չունի միջազգայնացման ռազմավարություն, սակայն պլանավորում է զարգացնել	0	0
Բուհը չունի միջազգայնացման ռազմավարություն և նման ծրագրի զարգացումը չի համարում	0	0
Միջազգայնացման ռազմավարությունը վերամշակման փուլում է	1	5.3




Հարց 21. Նախորդ հարցին դրական պատասխանելու դեպքում խնդրում ենք վերբեռնել համապատասխան փաստաթուղթը

19 բուհերից 12-ը վերբեռնել են համապատասխան փաստաթուղթը: Ուսումնասիրելով բուհերի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ վեր են հանվել միջազգայնացման ուղղությամբ հետևյալ հիմնական առաջնահերթությունները.

Առաջնահերթությունը	Ռազմավարական փաստաթղթում տվյալ առաջնահերթությունը սահմանած բուհերի թիվ
Աշխատակազմի և ուսանողների շարժունության ծրագրեր	11
Միջազգային փորձի ուսումնասիրություն (բենչմարքինգ)	10
Միջազգային գրախոսվող ամսագրերում տպագրվելու կամ մրցույթներում ու ծրագրերում մասնակցելու համար խրախուսման համակարգի մշակում և ներդնում	8
Օտարալեզու դասընթացների թվի աճ	8
Հրավիրյալ դասախոսներ	7
Օտարերկրյա ուսանողների ներգրավում	6
Համատեղ և կրկնակի դիպլոմով կրթական ծրագրերի թվաքանակի աճ	5
Միջազգային վարկանիշավորման աղյուսակներում բուհի տեսանելիության բարձրացում	4
Կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում	3
Սփյուռքի գիտնականների հետ հարաբերությունների զարգացում, ներգրավում	1

Հարց 22. Որոնք են բուհի միջազգայնացման հիմնական խոչընդոտները (ընտրել 3 առավել կարևոր տարբերակները)

	Պատասխան	Թիվ	%
1	Բուհի միջազգային նախաձեռնությունները սահմանափակող ազգային քաղաքականություն/կանոնակարգեր	4	21.1
2	Բուհի միջազգային նախաձեռնությունները սահմանափակող ինստիտուցիոնալ կանոնակարգեր/ընթացակարգեր	1	5.3
3	Հմուտ մարդկային ռեսուրսի պակաս	4	21.1
4	Միջազգայնացման նկատմամբ հետաքրքրության պակաս	1	5.3
5	Աշխատակազմի օտար լեզուներին չտիրապետելը	12	63.2
6	Ուսանողների օտար լեզուներին չտիրապետելը	9	47.4
7	Հայաստանում օտարազգի ուսանողների հայերենով սովորելու պահանջը	6	31.6
8	Օտար լեզուներով ամբողջական կրթական ծրագիր առաջարկելու ընթացակարգային բարդությունները	13	68.4
9	Վերոհիշյալ տարբերակներից որևէ տարբերակ խոչընդոտ չէ	1	5.3
10	Բոլոր տարբերակները	0	
11	Այլ, այդ թվում. Միջազգային պարբերականներում ՊԴ կազմի գիտահետազոտական աշխատանքների հրատարակման հետ կապված դժվարությունները	1	5.3




Հարց 23. Որոնք են Բուհի վերապատրաստման կարիքները՝ բուհի միջազգայնացումն առավել արդյունավետ կառավարելու ուղղությամբ (խնդրում ենք ընտրել 3 առավել կարևոր խնդիրները)

	Պատասխան	Թիվ	%
1	Ռազմավարական պլանավորման, իրականացման և մշտադիտարկման փորձի ուսումնասիրություն	2	10.5
2	Միջազգայնացման կանոնակարգերի/ընթացակարգերի ուսումնասիրություն	5	26.3
3	Գործընթացների ավտոմատացման (այդ թվում միջազգային) փորձի ուսումնասիրություն	4	21.1
4	Միջազգային բենչմարքինգի գործընթացի ուսումնասիրություն	9	47.4
5	Համատեղ/կրկնակի/բազմակի դիպլոմի կրթական ծրագրերի ներդրման փորձի ուսումնասիրություն	10	52.6
6	Ուսանողների փոխանակման, կրեդիտների կուտակման և ճանաչման ընթացակարգերի և գործիքակազմի ուսումնասիրություն	7	36.8
7	Դասախոսների փոխանակման, արդյունքների ճանաչման, խրախուսման կանոնակարգեր և մեխանիզմների ուսումնասիրություն	6	31.6
8	Վերոհիշյալ բոլոր տարբերակները	3	15.8
9	Վերոհիշյալ տարբերակներից որևէ տարբերակ կարևոր չէ	1	5.3
10	Այլ, այդ թվում. Միջազգային ուսանողների ներգրավման մեխանիզմների ճկունացում և արդյունավետության բարձրացում	1	5.3


Հարց 24. Արդյո՞ք բուհն ունի առանձնացված ստորաբաժանում կամ պատասխանատու հետազոտության միջազգայնացման համար

Տարբերակ	Թիվ	%
Այո	14	73.7
Ոչ	2	10.5
Դժվարանում եմ պատասխանել	1	5.3
Այլ, այդ թվում. Գիտության բաժին, Ֆոնդահայթայթման բաժին, Ամբերդ հետազոտական կենտրոն	1	5.3
Կան 2 առանձին ստորաբաժանումներ՝ գիտության բաժին, Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն: Դրանց գործունեությունը փոխկապակցված է, սակայն այդ բաժիններից յուրաքանչյուրն ունի իր առանձին գործառնության շրջանակը:	1	5.3




Հարց 25. Խնդրում ենք նշել արդյո՞ք Ձեր բուհ-ն ունի հետազոտության միջազգայնացմանը միջոցառումներ իրականացնելու նպատակով

Տարբերակ	Թիվ	%
Այո	10	52.6
Ոչ	5	26.3
Դժվարանում եմ պատասխանել	1	5.3
Այլ, այդ թվում. Հետազոտությունների միջազգայնացումը դիտարկվում է ընդհանուր միջազգայնացման բաղադրիչ և որպես նպատակ սահմանված է համապատասխան ռազմավարությամբ	1	5.3
Բուհի ռազմավարության մեջ 2 բաժին առանձնացված է ըստ գիտության և միջազգայնացման ոլորտների	1	5.3
Այլ փաստաթղթեր. Բաց գիտության ռազմավարություն	1	5.3




Հարց 26. Ինչ է արվում բուհ-ում հեղափոխական կարողությունների և հմտությունների զարգացման և հեղափոխությունների միջազգայնացման համար

	Տարբերակ	Թիվ	%
1	Ֆինանսական խրախուսում	12	63.2
2	Վերապատրաստումներ	4	21.1
3	Օտար լեզվի դասընթացներ դասախոսների և հետազոտողների համար	6	31.6
4	Միջազգային կոնֆերանսներ	12	63.2
5	Գրախոսվող ամսագրերում տպագրության խրախուսում և ծախսերի հատուցում	11	57.9
6	Ներհամալսարանական դրամաշնորհներ և կրթաթոշակներ ասպիրանտների և դասախոսական անձնակազմի համար	6	31.6
7	Միջազգային գիտաժողովներին մասնակակցության աջակցություն	11	57.9
8	Վերոհիշյալ բոլոր տարբերակները	2	10.5
9	Վերոհիշյալ տարբերակներից որևէ մեկը չի իրականացվում	0	0



Հարց 27. Արդյո՞ք բուհ-ն ունի հեղափոխողների միջնաժամկետ և երկարաժամկետ շարժունության ծրագրեր արտասահմանյան բուհերի հետ:


Տարբերակ	Թիվ	%
Այո	12	63.2
Ոչ	3	15.8
Դժվարանում եմ պատասխանել	1	5.3
Այլ, այդ թվում. Հեղափոխողների շարժունություն իրականացվում է էրազմուս+ միջբուհական ծրագրերի շրջանակներում	1	5.3
Այս պահին՝ ոչ	1	5.3
Ասպիրանտների շարժունության ծրագրեր	1	5.3



- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել
- Այս պահին՝ ոչ
- Հետազոտողների շարժունություն իրականացվում է Էրազմուս+ միջբուհական ծրագրերի շրջանակներում
- Ասպիրանտների շարժունության ծրագրեր

Հարց 28. Խնդրում ենք նշել գիտության միջազգայնացման հիմնական խոչընդոտները (առավելագույնը 3 պատասխան)

	Տարբերակ	Թիվ	%
1	Թերֆինանսավորում	7	36.8
2	Ենթակառուցվածքների բացակայություն	2	10.5
3	Առցանց շտեմարանների հետ աշխատելու փորձի բացակայություն	8	42.1
4	Գործող օրենսդրություն/կանոնակարգեր	1	5.3
5	Լեզվական խնդիրներ	9	47.4
6	Գործակիցով ամսագրերում տպագրվելու կարողությունների պակաս	10	52.6
7	Դասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածություն	5	26.3
8	ԲՈՒՀ-ում օտարալեզու պարբերականների սակավաթվություն	3	15.8
9	Վերոհիշյալ բոլոր խնդիրները խոչընդոտում են	3	15.8
10	Վերոհիշյալ խնդիրները որևէ տարբերակ խոչընդոտ չէ	2	10.5



Հարց 29. Նշեք՝ ինչ քայլեր են անհրաժեշտ ազգային մակարդակում գիտության միջազգայնացումը խրախուսելու համար

Պատասխաններ

Ֆինանսավորում

1. Հարկավոր է ֆինանսական միջոցների ներդրում:
2. Գիտության ֆինանսավորման աճ, միջազգային կոնֆերանսներին մասնակցության խթանում:
3. Գիտության միջազգայնացման ուղղությամբ ազգային մակարդակով մշակել խրախուսման ընթացակարգեր՝ աջակցելու բուհերին՝ հաղթահարելու միջազգայնացման ֆինանսական և ընթացակարգային խոչընդոտները:
4. Միջազգային հետազոտական ծրագրերի ֆինանսավորում, ցանցային համագործակցության կազմակերպում:
5. Ազգային մակարդակով գիտության ֆինանսավորման ծավալների ավելացում:
6. Ֆինանսավորման ավելացում:
7. Ազդեցության գործոն ունեցող ամսագրերում տպագրվող հեղինակների պետական աջակցության ծրագրեր:
8. Ֆինանսավորման ծավալների ավելացում, պետական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի չափանիշների վերանայման կարիք:

Համագործակցություն

1. Արտասահմանյան բուհերի հետ համագործակցություն հաստատելու սկզբնական փուլում պետական աջակցության մեխանիզմներ:
2. Միջգիտակարգային համագործակցություն և ենթակառուցվածքների համալրում և թարմացում:
3. Անհրաժեշտ է զարգացնել համագործակցային կապերն արտերկրի գիտնականների և հետազոտական կենտրոնների հետ, ներգրավվել վերապատրաստումների և որակավորման բարձրացման դասընթացներում, ապահովել համապատասխան լաբորատորիաների, սարքավորումների առկայությունը: Մշակել միջազգային համատեղ ծրագրեր, կատարել միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրություն և ըստ անհրաժեշտության տեղայնացում:
4. Միջազգային կառույցների հետ ավելի սերտ համագործակցություն, գիտությունը զարգացնող միջազգային ծրագրերի ՀՀ ակտիվ մասնակցություն, գիտություն-պետություն-մասնավոր հատված համագործակցության ընդլայնում ազգային և միջազգային մակարդակով:
5. 1. Համատեղ մագիստրոսական ծրագրեր 2. Դասախոսների, ուսանողների շարժունության ծրագրեր՝ հետազոտական նպատակներ հետապնդող 3. Օտար լեզուներով գիտահետազոտական հոդվածների հրապարակում տեղական պարբերականներում և հասանելիության ապահովում օտարերկրյա գործընկեր բուհերի շրջանակում 4. Հրապարակումներ միջազգային ինդեքս ունեցող օտարերկրյա գիտական պարբերականներում:
6. Մեծ նախագծերի մասնակցություն, հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտի ձևավորում, սաբսիդիալ:

Վերապատրաստում

1. Օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացում:
2. ՊԴ կազմի օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացում և միջազգային ամսագրերում տպագրվելու համար պետական մակարդակով խրախուսում:
3. ՊԴ կազմի ծանրաբեռնվածության թեթևացում, պարբերական վերապատրաստումների իրականացում, բուհում գիտության միջազգայնացման ոլորտում մասնագիտացված խորհրդատուի ներգրավում:
4. Դասախոսներին, ասպիրանտներին, դոկտորանտներին, հայցորդներին և մագիստրոսներին հետազոտական կարողություններով և գիտական հոդվածներ գրելու գիտելիքներով և կարողություններով զինելը:
5. Հայերենով գրախոսվող գործակիցով ամսագրերի ստեղծում, դասախոսների և հետազոտողների կարողությունների զարգացում գործակցով ամսագրերում տպագրվելու համար, միջազգային կոնֆերանսների մասնակցության խրախուսման մեխանիզմներ:

Հարց 30. Այս հարվածում կարող եք ներկայացնել առաջարկներ և նկատառումներ

Անհրաժեշտ ենք համարում ՀՀ բարձրագույն կրթության մասին նոր օրենքի և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի փաթեթի ընդունումը և արդյունավետ գործարկումը, ֆինանսական լրիվ միջոցների ներդրումը, արդիական, նյութատեխնիկական ռեսուրսների ապահովումը:

Միջազգային պարբերականներում տպագրության ֆինանսավորում առանց տարիքային սահմանափակման, Միջազգային պարբերականներում տպագրվելու պետական ֆինանսավորման մեխանիզմների բացակայություն:

Ռազմավարական կառավարման, գործունեության արդյունավետության ցուցանիշների մշակման, առցանց կրթության արդյունավետ կազմակերպման ուղղությամբ վերապատրաստումների իրականացում, պետական աջակցության և բուհի ինքնավարության մեծացում, բուհերի հավատարմագրման չափանիշների ու չափորոշիչների վերանայում:

Գիտության առևտրայնացմանը նպաստող հիմնադրամների ստեղծում: Այլ երկրների հետ համատեղ գիտական և հետազոտական խմբերի ստեղծման խթանների ապահովում:

Տեղեկատվության հասանելիության աստիճանի բարձրացում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում

- Հարցման արդյունքները վկայում են, որ բուհերի մեծ մասը (84.2 %) ներառականության ապահովումը սահմանել է որպես ռազմավարական նպատակ, սակայն ներդրման գործիքակազմը և անհրաժեշտ կանոնակարգող փաստաթղթերը դեռևս զարգացված չեն. բուհերի 74%-ը նշել է, որ քաղաքականություն կամ կանոնակարգող այլ փաստաթղթեր դեռևս առկա չեն:
- Ներառականության ապահովման համար որպես առանցքային խնդիր բուհերի կողմից դիտարկվում է ենթակառուցվածքների համապատասխանեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար, մինչդեռ, օրինակ, ներառման ենթակա ուսանողների բացահայտման համակարգի ներդրումը դիտարկվել է որպես առավել պակաս կարևոր խնդիր:
- Ներառականության ապահովման ուղղությամբ ռազմավարական մակարդակում խնդիրների սահմանումը բուհերի կողմից հիմնականում թիրախավորում է հաշմանդամություն ունեցող անձանց բարձրագույն կրթության ոլորտում ներառմամբ, ենթակառուցվածքների (շենքային պայմանների) համապատասխանեցմամբ, սակայն ներառման ենթակա այլ թիրախային խմբերի (միջազգային ուսանողներ, փախստականներ, տեղահանվածներ, ազգային փոքրամասնություններ և այլն) վերաբերյալ ծառայությունների ուղղությամբ նպատակադրումը խիստ սահմանափակ է:
- Ըստ փաստաթղթերի ուսումնասիրության՝ ռազմավարական մակարդակում ներառականության ամբողջական գործիքակազմի մշակման և ներդրման վերաբերյալ նպատակադրումը բացակայում է գրեթե բոլոր բուհերում. ուշադրությունից դուրս է մնացել թվային հարմարեցված ռեսուրսների, օժանդակ տեխնոլոգիաների, այլընտրանքային ձևաչափերով նյութերի ստեղծման և տարբերակված ուսուցման, խորհրդատվական և աջակցող ծառայությունների ներդրման, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի վերապատրաստման ուղղությամբ նպատակադրումը և ներդրման համար անհրաժեշտ գործիքակազմի մշակումը: Բուհերի 73.7%-ն ապահովում է խորհրդատվություն մինչև ընդունելությունը, որոշ բուհեր հարմարեցրել են նաև շենքային պայմանները, սակայն, օրինակ, ուսումնական ռեսուրսների (10.5%), կահույքի (0%), հարմարեցված ծրագրերով հագեցած համակարգիչների առկայությունը (0%) բուհերում գրեթե չի ապահովվում:
- Բուհերի կողմից կրթության առանձնահատուկ կարիքներով ուսանողների աջակցության համար որևէ բուհ չունի առանձանցված ստորաբաժանում (0%), 4 բուհում առկա են պատասխանատուներ, մնացյալ բոլոր բուհերում բացակայում է պատասխանատու կամ ստորաբաժանումը և համապատասխան ծառայությունները դեռևս զարգացած չեն, կամ պատասխանատվությունը վստահված է որևէ ստորաբաժանման կամ խորհրդի, ինչը խնդրահարույց է մասնագիտացված աջակցության առումով:
- Ներառականությունը, դատելով պատասխաններից, արդեն իսկ բուհական համակարգի օրակարգում է, սակայն դեռևս դիտարկվում է ակնհայտ դեպքերի հիման վրա, որոնք տեսանելի են կամ կրիտիկական. նման վերաբերմունքը խիստ սահմանափակում է ներբուհական ջանքերի ներազդման տիրույթը և այս դեպքում նույնպես չի նպաստում համընդհանուր ներառականության սկզբունքի գործարկմանը:
- Ողջունելի է, որ այս կամ այն չափով, տարաբնույթ ձևաչափերով առկա է համապատասխան փաստացի աջակցությունը կամ դրա առկայության անհրաժեշտության գիտակցումը, սակայն պատասխաններից չի երևում բուհերում համապատասխան խորհրդատվության համակարգվածությունը՝ ֆիզիկական հարմարեցումների, հատուկ հոգեբանամանկավարժական խորհրդատվության և/կամ միջամտության տեսանկյունից:

Ազգային

1. Տվյալների հավաքագրում

Արդյունավետ քաղաքականություն մշակելու համար անհրաժեշտ է ապահովել ազգային մակարդակում տվյալների շարունակական հավաքագրում, որի միջոցով հնարավոր կլինի բացահայտել խոցելի, անապահով և թերներկայացված խմբերի ուսանողներին, վերջիններիս կարիքներին համապատասխան մշակել նպատակային ծրագրեր:

2. Ֆինանսավորում և խրախուսում

Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգերը պետք է նպաստեն բարձրագույն կրթության ներառականության ուղղությամբ ռազմավարական նպատակների իրականացմանը: Անհրաժեշտ է ստեղծել բարձրագույն ուսումնական հաստատություններին աջակցելու և խրախուսելու ֆինանսական կայուն համակարգ՝ ներառականությանը միտված կառուցակարգեր ներդնելու, մարդկային ռեսուրսների վերապատրաստումներ իրականացնելու, օժանդակ ծառայություններ ստեղծելու, թվային հարթակներ զարգացնելու, ենթակառուցվածքներ ստեղծելու համար: Նշենք, որ նշյալ բոլոր ուղղություններով գործողությունների իրականացման համար որպես առանցքային խնդիր բուիերը ներկայացնում են ֆինանսական միջոցների սղությունը, հետևաբար այս առումով ֆինանսական խթանների ստեղծումը կնպաստեր զարգացմանը: Մրցակցային ֆինանսական միջոցների տրամադրմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է խրախուսել և ստեղծել ֆինանսական ինքնավարության համար պայմաններ:

3. Կարողությունների զարգացում

Առկա է տրամաբանական խզվածություն ազգային և ինստիտուցիոնալ փաստաթղթերի միջև: Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի առանցքային նպատակները դեռևս արտահայտված չեն ինստիտուցիոնալ ռազմավարական փաստաթղթերում: Բուիերի նոր ռազմավարական ծրագրերում կամ գործող ծրագրերում (վերանայման ընթացքում) անհրաժեշտ է արտահայտել ազգային առաջնահերթությունները: Կարողությունների զարգացման անհրաժեշտություն կա ինստիտուցիոնալ և ազգային մակարդակներում՝ տվյալահեն քաղաքականության մշակման (data-driven policymaking) և կառավարման ուղղությամբ:

4. Ֆինանսական աջակցություն թիրախային խմբերին

Գնահատել առկա ֆինանսական աջակցության հանրային համակարգերն ու նպաստել դրա զարգացմանը՝ ուղղակի ծախսերի փոխհատուցումից զատ իրականացնելով անուղղակի ծախսերի փոխհատուցում (օրինակ՝ կացարան, տրանսպորտային ծախսեր և այլն), ապահովելով հատկապես խոցելի խմբերի լիարժեք ներառականությունը բարձրագույն կրթության համակարգում: Ստեղծել հնարավորություններ թիրախային խմբերի համար լրացուցիչ և նպատակային ֆինանսավորում ստանալու:

**Ինստի-
տուցիոնալ**

1. Ռազմավարություն

Վերանայել ռազմավարական փաստաթղթերը, նպատակադրումը և սահմանումները՝ ներառականությունը դիտարկելով ավելի լայն համատեքստում, հաշմանդամություն ունեցող անձանցից զատ ներառման ենթակա թիրախային խմբերում ավելացնելով միգրանտներին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, բռնի տեղահանված ուսանողներին, սոցիալիապես անապահով ուսանողներին, ինչպես նաև միջազգային ուսանողներին: Վերազնահատել նշյալ թիրախային խմբերի ներառման անհրաժեշտությունը, նպատակը և լիարժեք ներառման համար անհրաժեշտ ծառայությունները: Վերանայել ռազմավարական ծրագրերը՝ բխեցնելով Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի նպատակներից և աջակցելով ազգային նպատակների իրականացմանն ինստիտուցիոնալ մակարդակում:

2. Կարիքների բացահայտում

Հաշմանդամություն ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներից զատ՝ բացահայտել և ապահովել միգրանտների, ազգային փոքրամասնությունների, բռնի տեղահանված ուսանողների, սոցիալիապես անապահով խմբերից ուսանողների, ինչպես նաև միջազգային ուսանողների կարիքները:

3. Բազմազանության կառավարում և ներառման քաղաքականություն

Ռազմավարական նպատակներին համահունչ՝ զարգացնել ներառականության և բազմազանության համապարփակ քաղաքականություն և հստակ կանոնակարգեր, ընթացակարգեր, որոնք կներկայացնեն ուսումնական հաստատության պարտավորությունը ներառական ուսումնական միջավայր ստեղծելու հարցում, ինչպես նաև կապահովեն ռազմավարական նպատակների ներդրումը բուհում: Վերափոխել կառավարման մոտեցումները՝ համապատասխանեցնելով «բազմազանության կառավարման» պահանջներին, ստեղծելով և պահպանելով ներառական կրթական միջավայր: Բազմազանության կառավարման նպատակն է հաստատությունում ստեղծել միջավայր, որտեղ բոլոր շահառուներն իրենց գնահատված և ընդգրկված կզգան, և որտեղ նրանք կարող են լիովին ներդնել իրենց գաղափարներն ու գիտելիքը: Բազմազանության կառավարման համար առանցքային է հավասար հնարավորությունների խթանումը, կողմնակալության և խտրականության բացառումը, ինչպես նաև հարգանքի և ներառման մշակույթի խթանումը:

4. Ենթակառուցվածքներ

Չնայած, որ 12 բուհ (63.2%) համարում է, որ շենքային ենթակառուցվածքների հարմարեցումներն (մուտք, լսարաններ, սանհանգույցներ և այլն) ապահովված են, այնուամենայնիվ մեր ուսումնասիրությունները փաստում են, որ ՀՀ բուհերում առկա ենթակառուցվածքները խիստ սահմանափակ են: Օրինակ, հաշմանդամություն ունեցող ուսանողների համար կառուցվել են թեքահարթակներ, սակայն սանհանգույցը, ճաշարանը, լսարանները, լաբորատորիաները հարմարեցված չեն. այս պարագայում թեքահարթակի առկայությունը հասկանալի չէ, թե ինչ նպատակի է ծառայում: Թեքահարթակների ապահովումից զատ՝ անհրաժեշտ է ապահովել ընդհանուր միջավայրի հարմարեցումներ, ինչպես նաև հարմարեցված սարքավորումներ և գույք, ուսումնական հարմարեցված նյութեր, թվային բովանդակություն, ծառայություններ և այլն:

Մակարդակ	Խորհրդատվություն
Ինստիտուցիոնալ	<p>5. Ծառայություններ Կրթության առանձնահատուկ կարիքներով ուսանողների աջակցության համար բուհերի մեծամասնությունում բացակայում են առանձնացված ստորաբաժանումներ և պատասխանատվությունը տարրալուծված է, ինչը խնդրահարույց է մասնագիտացված աջակցության ապահովման առումով: Հարցված բուհերից 6-ն (31.6%) ապահովում են հոգեբանի ծառայություն, 14-ն (73.7%) ապահովում են խորհրդատվություն մինչև ընդունելությունը, սակայն որևէ բուհում առկա չէ, օրինակ, հաշմանդամություն ունեցող ուսանողների աջակցման գրասենյակ (բաժին, պատասխանատու և այլն), ակադեմիական աջակցության, խորհրդատվական կենտրոն կամ ծառայություն՝ ուսանողին աջակցելու ուսուցման ընթացքում: Նշյալ ծառայություններն անհրաժեշտ է ապահովել՝ իրականացնելով հստակ պատասխանատվության բաշխում և ծառայությունների մասին իրազեկելով ուսանողներին:</p> <p>6. Դասախոսների և վարչական կազմի վերապատրաստում Անհրաժեշտ է իրականացնել օժանդակ, վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ ներկայացնելով ազգային առաջնահերթությունները համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծման ուղղությամբ, ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդների ուղղությամբ և այլն:</p>

ՄԱՍ II Կրթության կառավարման արդյունավետության բարձրացում

- Ինստիտուցիոնալ մակարդակում որպես կրթության կառավարման առավել կարևոր խնդիր բուհերն առանձնացնում են հետևյալ ուղղությունները. 1. նորարարությունների գեներացման, խթանման, ներդրման և կառավարման փորձի պակաս (63.2 %), 2. կանաչ կառավարման փորձի պակաս (36.8 %), 3. ռազմավարական պլանավորման փորձի պակաս (26.3 %) և 4. կրթության կառավարման տեղեկատվական թերի համակարգեր (26.3 %):
- Հատկանշական է, որ որևէ բուհ (0%) որակի ապահովման փորձի պակասը չի դիտարկում որպես առանցքային խնդիր, ինչը հակասում է ՈԱԱԿ փորձագիտական զեկույցներին: 2021-2023թթ. ՈԱԱԿ-ն իրականացրել է 17 բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավաստարմագրում, որից 6 բուհի դեպքում (35%) «Որակի ներքին ապահովում» չափանիշը գնահատվել է բացասական: Բուհերի կողմից որպես 5 առավել կարևոր վերապատրաստման ուղղություններ միջնաժամկետ կտրվածքով ընտրվել են հետևյալ թեմաները. 1. նորարարությունների կառավարում (47.4%), 2. միկրոորակավորումների զարգացում և ներդրում (47.4%), 3. բուհերի ձեռնարկատիրական կարողությունների զարգացում (47.4%), 4. ռեսուրսների կառավարում (36.8%), 5. բուհ-գործատու կապի ապահովում (36.8%):

Մակարդակ	Խորհրդատվություն
Ազգային	<ol style="list-style-type: none"> 1. Կրթական կամ հետազոտական նպատակային դրամաշնորհային ծրագրերի միջոցով ապահովել բուհերի կարողությունների զարգացում վերոհիշյալ ուղղություններով: 2. Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում կրթության և գիտության զարգացման առաջնահերթություններն ու այդ ուղղությամբ իրականացվող կրթագիտական նախագծերը՝ ազգային մակարդակում նոր և ապագամետ մասնագիտությունների լիցենզավորման միջոցով խրախուսել բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ զարգացնելու «կանաչ կրթական ծրագրեր»: 3. Իրականացնել բուհերի ինստիտուցիոնալ ղեկավարների և կրթական ուղղությամբ պատասխանատուների կարողությունների զարգացման ծրագրեր, կազմակերպել ազգային և միջազգային գիտաժողովներ, համաժողովներ: 4. Առաջարկել խթաններ (նպատակային ֆինանսավորում, հարկային արտոնություններ և այլն)՝ արդյունաբերության ոլորտի հետ համագործակցային ծրագրերի իրականացման նպատակով, սահմանել համատեղ նպատակներ և կյանքի կոչել դրանք: 5. Դիտարկել կարճ ցիկլով դիպլոմավորման հնարավորությունը (օրինակ՝ բակալավրիական մեկ կրթության առկայության դեպքում՝ ավելի կարճ ժամանակահատվածում վերաորակավորման հնարավորությունն այլ ուղղությամբ):
Ինստիտուցիոնալ	<ol style="list-style-type: none"> 6. Ռազմավարական ծրագրերի վերանայման ընթացքում կրթության կառավարման թեմաները սահմանել որպես առաջնահերթություն և նպատակների իրականացման համար ապահովել համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Առաջընթացը գնահատելու նպատակով քանակական ցուցիչներից զատ՝ սահմանել նաև որակական ցուցիչներ: 7. Կարողությունների զարգացման ազգային և միջազգային ծրագրերի մշակման ընթացքում վերոհիշյալ թեմաները պահել ուշադրության կենտրոնում՝ հնարավորության դեպքում զարգացնելով նոր ծրագրեր նշյալ թեմաներով մարդկային ռեսուրսների վերապատրաստման ուղղությամբ, միջազգային համագործակիցների փորձի ուսումնասիրության, ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում տեղայնացման նպատակով: 8. Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի միջազգային փոխանակման ծրագրերի իրականացման ընթացքում վերոհիշյալ թեմաները ներառել որպես ուսումնասիրության թեմա:

Ուսուցում և ուսումնառություն

- Բուհերի մեծ մասը միջին (47.4 %) և բարձր (36.8 %) է գնահատել իրենց հաստատությունում ինտերակտիվ դասավանդման մեթոդների ներդրումը, սակայն ներկայացված լավագույն փորձը սահմանափակվում է որոշ դասընթացների օրինակներով և համագործակցային մեթոդների ինստիտուցիոնալացումը և համընդհանուր կիրառման փորձը հավելյալ ուսումնասիրության կարիք ունի:
- Բուհերն առաջնային են համարում գործնական փորձերի նախագծման և անցկացման (73.7 %), ինչպես նաև նախագծահեն ուսուցման (68.4 %), դեպքի ուսումնասիրություն (case study) (36.8%) և ձևավորող գնահատման մեթոդների (36.8%) ուղղությամբ վերապատրաստումները:
- Ուսուցման և ուսումնառության մեթոդներն առավել համագործակցային և ուսանողակենտրոն դարձնելու համար որպես 3 առանցքային խոչընդոտ բուհերը նշել են. 1. դասախոսների վերապատրաստման կամ մասնագիտական զարգացման ոչ բավարար հնարավորությունները (57.9 %), 2. ֆինանսական սահմանափակումները (42.1 %), 3. համապատասխան տեխնոլոգիաների կամ ռեսուրսների հասանելիության բացակայություն (36.8%) և ուսանողների կամ մանկավարժների դիմադրությունն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու հարցում (36.8%): Մտահոգիչ է այն, որ մասնակիցների 36.8 %-ը «ուսանողների կամ մանկավարժների դիմադրությունն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու հարցում» տարբերակն է նշել, ինչը փաստում է ուսուցանման կամ սեփական ուսումնառության գործընթացն առավել համագործակցային միջավայրում անցնելու պատրաստակամության պակասի մասին:

Մակարդակ	Խորհրդատվություն
Ազգային	<ol style="list-style-type: none"> 1. Տրամադրել մրցակցային ֆինանսական միջոցներ՝ կրթական նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև նորարար ուսուցման և ուսումնառության մեթոդներով կրթական ծրագրերի զարգացման կամ վերամշակման նպատակով յուրաքանչյուր բուհ պատասխանատու է տրամադրվող ծառայությունների որակի համար, սակայն պիտի ունենա բավարար ինքնավարություն՝ նորարարական մոտեցումների փորձարկման և ներդրման համար: 2. Ստեղծել մասնագիտական զարգացման համայնք և ազգային հարթակ՝ ուսուցման և ուսումնառության համագործակցային մեթոդների ուղղությամբ փորձի փոխանակման և գիտելիքի շրջանառության նպատակով: Ապահովել քննարկումների, աշխատաժողովների, գիտաժողովների պարբերականությունը: 3. Իրականացնել ուսումնասիրություններ՝ բացահայտելու, խրախուսելու և տարածելու լավագույն փորձը (օրինակ՝ տարեկան մրցանակաբաշխությունների միջոցով): 4. Տարբեր ոլորտներում համագործակցային ուսուցման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ քանակական և որակական հետազոտությունների համար տրամադրել մրցակցային ֆինանսական միջոցներ, իսկ հետազոտության արդյունքները տարածել ակադեմիական համայնքում: 5. Ֆինանսավորել համագործակցային մեթոդների վերաբերյալ հայալեզու հրապարակումները և խթանել դրանց տպագրությունը թվային և տպագիր եղանակներով: 6. Ողջունելի է, որ բուհերը հիմնականում ինքնաքննադատաբար են վերաբերվում նորարարությունների գեներացման, խթանման, ներդրման և կառավարման փորձի հարցում: Ուստի, թերևս, ժամանակն է մշակել բուհերի շրջանում փորձի փոխանակման հնարավորություններ, ինչպես նաև խթանել արդեն իսկ հաջողված ծրագրերի շարունակականությունը՝ հիմք ընդունելով առաջանցիկ փորձի ներդրման և դրա հիման վրա տեղում նորարարական մոտեցումների, մեթոդաբանության և գործիքակազմի մշակման նախնական փորձի փոխանակումը:

Մակարդակ	Խորհրդատվություն
Ինստի-տուցիոնալ	<p>7. Պարբերաբար իրականացնել ներբուհական կարիքի գնահատում և դրա հիման վրա ապահովել աշխատակազմի շարունակական վերապատրաստումներ, հստակեցնել դասախոսների պարտականությունները և առաջնահերթությունները՝ վերապատրաստումներն ուղղելով դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացմանը:</p> <p>8. Հնարավորության դեպքում ստեղծել ուսուցման և ուսումնառության, տեխնոլոգիայի ինտեգրման կենտրոններ՝ ապահովելով պորֆեսորադասախոսական կազմի շարունակական վերապատրաստում, ընթացիկ աջակցություն, մեխթորական ծրագրերի իրականացում, խորհրդատվություն և այլն:</p> <p>9. Դասախոսների գնահատման համակարգում առանձնակի ուշադրություն դարձնել համագործակցային մեթոդների կիրառմանը՝ իրականացնելով լավագույնների ընտրություն և մրցանակաբաշխություն, խրախուսելով դրական փորձի տարածումը:</p> <p>10. Շարունակաբար բարելավել լսարանների համալրումը տեղեկատվական տեխնոլոգիաներով և դասախոսների համար ստեղծել հարմարավետ աշխատանքային պայմաններ:</p> <p>10. Իրականացնել ներքին դրամաշնորհային ծրագրեր՝ համագործակցային մեթոդների ուսումնասիրության, դասընթացների մշակման և փորձի տարածման նպատակով:</p> <p>11. Իրականացնել պորֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակման և ներդրման (outcome based educational program – OBE), ինչպես նաև գնահատման միջոցով ուսուցանելու կարողությունների զարգացման ուղղությամբ (Assessment for Learning-AFL): Ի լրումն հիմնականում գործող «վերևից ներքև» գնահատման համակարգին, մշակել և ներդնել նաև անձնակազմի «ներքևից վերև» գնահատման մեխանիզմներ:</p>

Թվայնացում

- Բուհերի 36.8 %-ը բարձր և շատ բարձր է գնահատել բուհում թվայնացման առկա մակարդակը, և միայն 47.4 %-ն է այն գնահատել որպես միջին: Հաջորդ հարցադրման արդյունքներով պարզ է, որ բուհերում հիմնականում թվայնացված են.
 1. ֆինանսական կառավարումը և հաշվապահությունը (78.9%),
 2. փաստաթղթերի կառավարումը և հաշվառումը (73.7%),
 3. անձնակազմի միջև հաղորդակցությունը և համագործակցությունը (42.1%). ընդամենը 1 բուհ է նշել ուսումնական գործընթացի կառավարումը հաջողությամբ թվայնացնելու վերաբերյալ:
- Ըստ բուհերի կողմից ներկայացված տվյալների, ուսուցման և ուսումնառության ոլորտում հաջողությամբ թվայնացվել են միայն դասընթացների նյութերի բաշխման (68.4%) և ուսանողների հետ հաղորդակցության (63.2%) գործընթացները, իսկ ուսուցման և ուսումնառության ոլորտում ամբողջական թվայնացման փորձի առկայության մասին փաստում է միայն 3 բուհ (15.8%): Այս ուղղությամբ որպես առանցքային խոչընդոտ նշվում է պորֆեսորադասախոսական կազմի կողմից դրա կարևորության ցածր գիտակցումն ու մեթոդական թերի պատրաստվածությունը:
- Որպես կառավարչական գործընթացների թվայնացման հիմնական խոչընդոտ բուհերի մեծամասնությունը խնդիրները դիտարկում են մարդկային ռեսուրսների առկա բացի և վերապատրաստման (11 բուհ հարցված 19-ից), ինչպես նաև ֆինանսական միջոցների սղության (19-ից 7-ը) ոլորտում, մինչդեռ դասավանդման և ուսուցման ոլորտների թվայնացման ուղղությամբ գերակշռում է միայն մարդկային ռեսուրսների վերապատրաստման բացը (19-ից 11-ը): Դասավանդման և ուսուցման ոլորտների թվայնացման համար ֆինանսական միջոցների սղությունը որպես առանցքային խոչընդոտ դիտում է ընդամենը մեկ բուհ:

Մակարդակ	Խորհրդատվություն
Ազգային	<ol style="list-style-type: none"> Գնահատել բարձրագույն կրթության ոլորտում տվյալների հավաքագրման և տվյալահեն կառավարման նպատակով ամբողջական համակարգի մշակման հնարավորությունները, անհրաժեշտ ներդրումները և ապահովելով վիճակագրության հավաքագրման կենտրոնացված համակարգ: Զարգացնել բլոկչեյն տեխնոլոգիաներ՝ դիպլոմների պահպանման, թվային, փոխանցելի, ստուգելի որակավորումների տրամադրման նպատակով:
Ինստիտուցիոնալ	<ol style="list-style-type: none"> Պլանավորել, տրամադրել ֆինանսական ռեսուրսներ կամ ներգրավել դրամաշնորհային միջոցներ՝ բուհի ներքին կառավարման տեղեկատվական համակարգերի կատարելագործման նպատակով՝ լրացնելով ուսումնական գործընթացի ավտոմատացման առկա բացը (ըստ հետազոտության արդյունքի բուհերում թվայնացված են հիմնականում ֆինանսական կառավարումը և հաշվապահությունը, փաստաթղթերի կառավարումը և հաշվառումը, անձնակազմի միջև հաղորդակցությունը): Հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ճկուն ուսումնական պլանների կազմմանը, դասընթացների գրանցմանը, ներբուհական և միջբուհական շարժունության վերաբերյալ տեղեկատվության պահպանմանը, սեփական ակադեմիական առաջադիմության տեղեկատվության վերաբերյալ ուսանողի հասանելիությանը և այլն: Վերջինը կարևոր է ճկուն ուսումնական պլանների կազմման, խմբային ուսումնական պլանների փոխարեն առավել ճկուն, անհատական ուսումնական պլանների կազմման հնարավորությունների ստեղծման համար, ինչը խիստ կարևոր է ուսանողների տարբերակված և անհատականացված ուսուցման կազմակերպման, շարժունության ապահովման համար: Իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի ընթացիկ վերապատրաստում և աջակցություն՝ Ուսումնառության կառավարման համակարգերի (Learning management system - LMS) առավել արդյունավետ օգտագործման նպատակով (ըստ հետազոտության արդյունքների հիմնականում համակարգերն օգտագործվում են նյութերի բաշխման և հաղորդակցության նպատակով): Ապահովել ուսանողների ներգրավվածությունը դասընթացի բովանդակության և վերջնարդյունքների կառավարման, հանձնարարությունների և վերջնաժամկետների կառավարման, թեստերի և գնահատման, քննարկումների կազմակերպման և այլ գործառնությունների իրականացման հարցերում: Ապահովել կրթության բովանդակության թվայնացման նպատակով ծառայությունների և վերապատրաստումների շարունակականությունը՝ համապատասխան կենտրոնների, բաժինների ստեղծմամբ կամ պատասխանատուների նշանակմամբ: Իրականացնել նպատակային աշխատանքներ՝ արդեն իսկ գործող ներբուհական կենտրոնների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ֆինանսավորել և իրականացնել նպատակային հետազոտական ծրագրեր, որոնք կնպաստեն հաստատության զարգացմանը (R&D) թվայնացման ուղղությամբ:

Կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում

- Հարցված բուհերի 100%-ը միջազգայնացումը սահմանել է բուհի առաքելությունում և/կամ տեսլականում: Ընդ որում, բուհերի 36,8%-ն ունի Միջազգայնացման առանձին ռազմավարություն, իսկ 57,9%-ի դեպքում միջազգայնացման ռազմավարությունը ներառված է բուհի ընդհանուր ռազմավարական ծրագրում (ՌԾ)՝ որպես առանձին նպատակ:
- Ըստ բուհերի, միջազգայնացման հիմնական երեք խոչընդոտները հետևյալն են.
 1. օտար լեզուներով ամբողջական կրթական ծրագիր առաջարկելու ընթացակարգային բարդությունները (68,4%),
 2. աշխատակազմի օտար լեզուներին չտիրապետելը (63,2%),
 3. ուսանողների օտար լեզուներին չտիրապետելը (47,4%):
- Որպես առանցքային խոչընդոտ է դիտվել նաև Հայաստանում օտարազգի ուսանողների հայերենով սովորելու պահանջը (31,6%): Հատկանշական է, որ հարցման մասնակիցների 68,4 %-ը որպես հիմնական խոչընդոտ է նշել օտար լեզուներով ամբողջական կրթական ծրագիր առաջարկելու ընթացակարգային բարդությունները, ինչը ազգային մակարդակում առկա հիմնական խոչընդոտներից է և հնարավոր չէ կարգավորել առանձին բուհերի ջանքերով:
- Որպես բուհի մարդկային ռեսուրսների վերապատրաստման առաջնային երեք կարիքներ բուհերն ընտրել են հետևյալ տարբերակները. 1. միջազգային բենչմարքինգի գործընթացի ուսումնասիրություն (47,4%), 2. համատեղ/կրկնակի/բազմակի դիպլոմի կրթական ծրագրերի ներդրման փորձի ուսումնասիրություն (52,6%), 3. ուսանողների փոխանակման, կրեդիտների կուտակման և ճանաչման ընթացակարգերի և գործիքակազմի ուսումնասիրություն (36,8%):
- Բուհերի կողմից ներկայացված ռազմավարական փաստաթղթերի վերլուծությունից պարզ է, որ ընդամենը 6 բուհ է միջազգային ուսանողների ներգրավումը դիտարկում որպես ռազմավարական ամրագրված առաջնահերթություն: Ներկայացված ռազմավարական փաստաթղթերում որպես ինստիտուցիոնալ առաջնահերթություն միջազգայնացման ուղղությամբ սահմանված է ուսանողների և աշխատակազմի շարժունության ծրագրերի ավելացումը (11 բուհ (57,9%) ունի համապատասխան ռազմավարական նպատակադրում) և միջազգային փորձի ուսումնասիրությունը (10 բուհ (52,6%) ներկայացրել է որպես ռազմավարական առաջնահերթություն):

Մակարդակ	Խորհրդատվություն
Ազգային	<ol style="list-style-type: none"> 1. Ուսումնասիրել և վերանայել միջազգային ուսանողների ընդունելության գործընթացն ազգային մակարդակում՝ հնարավորինս թվայնացնելով գործընթացը և ապահովել գործընթացի միջազգային համադրելիությունը: 2. Ուսումնասիրել օտար լեզուներով ամբողջական կրթական ծրագրեր առաջարկելու ընթացակարգերը՝ վերհանելով առանցքային խնդիրները և վերանայելով պահանջները: 3. Ազգային մակարդակում (օրինակ՝ ՈԱԱԿ ազգային և միջազգային փորձագետների, ինչպես նաև ԲԿԲՓ փորձագետների և TAM-երի ներգրավմամբ) իրականացնել առանցքային թեմաներով վերապատրաստման ծրագրեր, ապահովել փորձի փոխանակման հարթակներ և հնարավորություններ, մասնավորապես բուհերի կողմից առանձնացված հետևյալ ուղղություններով. <ul style="list-style-type: none"> • միջազգային բենչմարքինգի գործընթացի ուսումնասիրություն, • համատեղ/կրկնակի/բազմակի դիպլոմի կրթական ծրագրերի ներդրման փորձի ուսումնասիրություն, • ուսանողների փոխանակման, կրեդիտների կուտակման և ճանաչման ընթացակարգերի և գործիքակազմի ուսումնասիրություն:

Մակարդակ	Խորհրդատվություն
Ազգային	4. Վերոհիշյալ վիճակագրական արտացոլումը հատկանշական է և տրամաբանական, քանի որ այն ի ցույց է դնում արդեն իսկ արմատացած բենչմարքինգի անհրաժեշտության գիտակցումը, որը պետք է լավագույն հեռանկարով՝ հանգեցնի համատեղ կրթական ծրագրերի մշակմանը: Ինչևէ, ազգային մակարդակում անհրաժեշտ են գործընթացին նպաստող առավել ամբողջական գործիքներ՝ կրեդիտների կուտակման և փոխճանաչման, փոխանակումների խրախուսման և փոխանակման արդյունքում ձևավորված համայնքի կայացման համար:
Ինստիտուցիոնալ	5. Ներդնել աշխատակազմի օտար լեզուների իմացության բարելավման գործուն մեխանիզմներ: 6. Բակլավրիական և մագիստրոսական որոշ դասընթացներ առաջարկել օտար լեզուներով՝ բարձրացնելով բուհի պահանջները և նշածողը (հատկապես գերազանցությամբ ավարտողների համար): 7. Ապահովել հայազգի ուսանողների ուսումնառությունը միջազգային ուսանողների հետ միասին (շատ բուհերում ստեղծվում են առանձնացված խմբեր)՝ նպաստելով շփումներին և լեզուների իմացության բարելավմանը: 8. Վերանայել ռազմավարական նպատակները՝ միջազգայնացման ուղղությամբ ազգային ռազմավարական առաջնահերթություններին համահունչ:

ՄԱՍ VI Հետազոտության միջազգայնացում

- Բուհերի 73.7 %-ն ունի հետազոտության միջազգայնացման համար պատասխանատու ստորաբաժանում կամ պատասխանատու:
- Հետազոտության միջազգայնացմանը միտված ռազմավարություն ունեն բուհերի 52.5%-ը (հիմնականում ներառված է բուհի ընդհանուր ռազմավարական ծրագրում՝ որպես նպատակ), իսկ 26.3 %-ի դեպքում հետազոտությունների միջազգայնացումը ռազմավարական նպատակ չի համարվում:
- Ֆինանսական խրախուսումը (63.2 %), միջազգային կոնֆերանսները (63.2 %), գրախոսվող ամսագրերում տպագրության խրախուսումն ու ծախսերի փոխհատուցումը (57.9 %) հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացման, հետազոտությունների միջազգայնացման հիմնական մեխանիզմներն են բուհերում: Նշյալ գործիքակազմից օգտվելու աշխատակիցների թիվը պարզելու համար անհարժեշտ է իրականացնել հավելյալ հետազոտություն, ինչը թույլ կտար գնահատել գործիքակազմի կիրառության արդյունավետությունը:
- Գործակիցով ամսագրերում տպագրվելու կարողությունների պակասը (52.6%), լեզուների չտիրապետելը (47.4%) բուհերը նշել են որպես գիտության միջազգայնացման հիմնական խոչընդոտներ:
- Թերֆինանսավորումը (36.8 %) նույնպես բուհերը ներկայացրել են որպես հիմնական խոչընդոտ:
- Ընդամենը 4 (21%) բուհ է ապահովում վերապատրաստումներ հետազոտության միջազգայնացման ուղղությամբ:
- Բուհերի ներկայացրած ռազմավարական փաստաթղթերում հետազոտության և գիտության միջազգայնացման ուղղությամբ հիմնականում նշվում է միջազգային վարկանիշավորված ամսագրերում տպագրության աճը, միջբուհական գիտական համագործակցությունների թվի աճը: Ընդամենը մեկ բուհ ներկայացրել է ռազմավարական գործողություն և համապատասխան ցուցիչ՝ սփյուռքից գիտնականների հետ հարաբերությունների զարգացման, համատեղ գիտական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Մակարդակ	Խորհրդատվություն
Ազգային	<ol style="list-style-type: none"> 1. Մշակել և ներդնել գնահատման առանցքային ցուցիչներ՝ ուղղված արդյունքահեն ֆինանսավորման գործուն մեխանիզմներով հետազոտության միջազգայնացմանը: 2. Ազգային մակարդակում սահմանել, պարբերաբար գնահատել, վերանայել հետազոտական օրակարգ, որը կարտահայտի ոչ միայն ազգային այլ նաև համամարդկային խնդիրներն ու հետազոտական առաջնահերթությունները, համաշխարհային նոր մարտահրավերները, կլինի հետաքրքիր միջազգային հետազոտական հանրության համար: 3. Գիտության և հետազոտության ֆինանսավորման ծավալների մեծացմանը զուգահեռ՝ ապահովել առանցքային խնդիրների ուղղությամբ մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացումն ազգային և միջազգային ծրագրերով:
Ինստի- տուցիոնալ	<ol style="list-style-type: none"> 4. Մշակել հետազոտության և զարգացման առանձին ռազմավարություն՝ հետազոտության միջազգայնացման նպատակով սահմանելով հստակ նպատակներ, թիրախային ցուցանիշներ, գնահատման առանցքային ցուցիչներ և ռեսուրսներ: 5. Իրականացել արդյունավետության գնահատում բուհերի մեծ մասում գործող գործիքակազմի վերաբերյալ (ֆինանսական խրախուսումը, միջազգային կոնֆերանսները և ֆինանսավորում, գրախոսվող ամսագրերում տպագրության խրախուսումն ու ծախսերի փոխհատուցումը և այլն)՝ ըստ անհրաժեշտության վերանայելով հետազոտությունների միջազգայնացման առկա գործիքակազմը (օրինակ անհրաժեշտ է գնահատել որքանով են ներդրված խրախուսման մեխանիզմներն ապահովել միջազգային հրապարակումների աճ): 6. Միջազգային համագործակիցների, ԲԿԲՓ փորձագետների, ՈԱԱԿ փորձագետների աջակցությամբ իրականացնել վերապատրաստման ծրագրեր՝ հետազոտության միջազգայնացման և հատկապես գործակիցով ամսագրերում տպագրվելու կարողությունների բարելավման ուղղությամբ (բուհերի կողմից նշվել է որպես առանցքային բաց): 7. Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում օտար լեզուների բարելավումը ակադեմիական անգլերենով (կամ այլ օտար լեզվով) սահմանել որպես ռազմավարական առաջնահերթություն՝ տրամադրելով բավարար ռեսուրսներ:

Հավելված 1. Հետազոտության մասնակից բուհերի ցանկը և հապավումները

	Անվանում
1	Գավառի պետական համալսարան
2	Գորիսի պետական համալսարան
3	Երևանի պետական համալսարան
4	Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան
5	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
6	Եվրասիա միջազգային համալսարան
7	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
8	Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
9	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
10	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
11	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
12	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
13	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
14	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
15	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն
16	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան հիմնադրամ
17	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
18	Վանաձորի պետական համալսարան
19	Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան



Հայաստանում
Էրազմուս+
ազգային գրասենյակ



Կ. Ուլնեցու 3 1/3 փ., 601 սենյակ,
0037 ք. Երևան, Հայաստան



+374 91 21 62 58



info@erasmusplus.am
program@erasmusplus.am



erasmusplus.am



neoarm



@ErasmusArmenia



@erasmusplusarmenia



**Co-funded by
the European Union**

Սույն գրքույկն արտադրում է միայն այն հեղինակած կազմակերպության տեսակետները և որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Եվրոպական հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում հրատարակության բովանդակության և օգտագործված աղբյուրների համար: